ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հնագիտական նյութերն ու մատենագրական աղբյուրները վկայում են, որ Հայաստանում մեղվին ծանոթ են եղել տակավին հնագույն ժամանակներից, և մեղվապահությունը զգալի դեր է խաղացել հայերի կյանքում։ Այդ է հավաստում վշրանքների ձևով մեզ հասած հայոց նշանագրերում հանդիպող մեղրի գաղափարագիրը[1] mz։

Մեղվի վերաբերյալ ամենահնագույն տեղեկությունները Հայկական լեռնաշխարհում թվագրվում է մ. թ. ա. երկրորդ հազարամյակով[2] (նկ. 1)։ Նոր Բայազետի (Կամոյի) շրջանում հայտնաբերված բրոնզե գոտու զարդանկարների միջատի պատկերը (մ. թ. ա. երկրորդ հազարամյակ) ավելի նման է նստած մեղվի, քան բզեզի, ինչպես ենթադրում էր Ե. Լալայանը[3]։ Ավելին, նույն տեղում գտնվել է երեխայի կմախքի մոտ դրված կավե ճրագ, որը ենթադրել է տալիս, թե ճրագում վառվել է մոմ, քանզի հետագա կրոնական և ժողովրդական սովորություններից հայտնի է, որ հանդերձյալ աշխարհում, հանգուցյալի ճանապարհը լուսավորելու համար հուղարկավորության ծեսերն ուղեկցվում էին վառած մոմերով[4]։ Ավելի որոշակի է մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներին (X—IX դդ.) վերաբերող Լճաշենի պեղումներից հայտնաբերված, դարձյալ բրոնզե գոտու, զարդամոտիվների մեջ հանդիպող զույգ միջատների պատկերները, որտեղ հստակորեն երևում են թռչող մեղուներ[5] (նկ. 2)։

Սևանի ավազանում հայտնաբերված գոտիները, հետազոտողների միահամուռ վկայությամբ, ունեցել են պաշտամունքային նշանակություն և դրանց վրա այլ զարդերի հետ միասին կան նաև մեղվի պատկերներ, իսկ ավելի ուշ՝ քրիստոնեության շրջանում, մեղվի արտադրած մոմը հաստատուն տեղ է գրավում կրոնական պաշտամունքների մեջ։

Հնում առհասարակ ընդունված էր դրամների, կնիքների, մատանիների վրա, որպես խորհրդանիշ, որևէ կենդանու, թռչունի կամ միջատի պատկեր քանդակել։ Այս առումով հատկանշական է հունական քաղաք-պետությունների օրինակը, որոնցում մ. թ. ա. IV դ. կատարված և Հայաստանում շրջանառության մեջ դրված դրամներից երկուսի վրա պարզորոշ դրոշմված է մեղվի

---

1 Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և դրություն, Երևան, 1973, էջ 240։

2 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970, աղ. 48, նկ. 4։

3 Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 186, նկ. 180։

4 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 86, Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Երևան, 1941, էջ 142—143.

5 Գոտին պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի հնագիտական բաժնի 2152 գույքահամարի տակ։ Գոտու այս հատվածի գծանկարը սիրով մեզ տրամադրեց Հ. Մնացականյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

պատկերը[6]։ Նույնքան հստակորեն մեղվի պատկեր է երևում Անի-Կամախին վերագրված երկու դրամների[7] (նկ. 3), ինչպես նաև պարսից Վաղարշակ թագավորի հատած դրամի վրա[8]։ Գառնիի պեղումներից հայտնաբերվել և այժմ Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվում է մի կնիքմատանի (I—II դդ.), որի ակի վրա պատկերված է մեղու[9] (նկ. 4)։

Դվինի պեղումներից հայտնաբերված իրերի վրա ևս կան մեղվի հետ առնչվող պատկերներ։ Միջնաբերդի կենտրոնական թաղամասի շերտերից հանվել են V—VII դդ. բլթակավոր անգույն հաստ ապակե թասեր, որոնց քանդակները նմանվում են մեղրահացի վեցանկյունանի բջիջների[10] (նկ. 7)։ Նույն կերպ է զարդարված նաև շողուն կամ ոսկեփայլ հախճապակե սափորը, որը թվագրվում է XII—XIII դդ.[11]։

Հայաստանի քարակոփ արվեստում նույնպես առկա են մեղվապահությանն առնչվող պատկերներ։ Այսպես, Գեղարդի (Այրիվանք, XIII դ.) քարակոփ գավթի գմբեթաձև առաստաղին քանդակված է մեղրախորսխի (մոմաշեշ) պատկեր[12]։ Նույնպիսի պատկեր կա Ախթամարի տաճարի զարդաքանդակների մեջ՝ հրեշտակների գլուխների շուրջը երիզած պսակի համալիրում (X դ.)[13] (նկ. 8), Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի մոտ գտնվող Մակարավանք եկեղեցու գավթի (XIII դ.) սյան խոյակի վրա[14], ինչպես նաև հինավուրց Արցախի Գանձասարի վանքի գավթի առաստաղի վրա (XIII դ.)[15]։

Հայերեն հին ձեռագրերն ու մանրանկարները ևս ուշագրավ վկայություններ են պարունակում մեղվապահության վերաբերյալ։ Այսպես, Մատենադարանի № 3708 ձեռագրի գունավոր նկարում տղա և աղջիկ զույգերը մոմերը ձեռքերին բռնած պարում են[16]։ Այլ ձեռագրերում որպես զարդանախշ օգտագործված է մեղվի քթոցավոր փեթակի պատկերը, իսկ լուսանցքներում պատկերված են մոմակալներում դրված վառված մոմեր (XIII և XVII դդ.)[17]։ Ձեռա-

---

6 А. Н. Зограф, Античные монеты. Материалы и исследования по археологии СССР, № 16, М.—Л., 1951, стр. 98, табл. IX (рис. 22, 25).

7 Ատրպետ, Հայ թագավորների դրամները («Ազգագրական հանդես», գ. 22, Թիֆլիս, 1912, էջ 223, նկ. 15)։

8 Petrowicz Sammlung, Arsaciden-Münten, Catalog, Wien, 1904, pl. 24 նկ. 12։

9 Б. Н. Аракелян, Гарни, II, Ереван, 1957, стр. 80, рис. 50.

10 Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., հ. I, Երևան, 1970, աղ. 33, նկ. 5։

11 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. I, Երևան, 1958, տախ. LIX, նաև Հայաստանի պատմության պետական թանգարան, հավաքածո 1913/145։

12 А. Саинян, Гарни и Гегард, М., 1958. «Հայկական եկեղեցիներ», Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1970, „Yerevan and its environs", Leningrad, 1973, նկ. 86; G(h)eghard, documents of architecture. 6. Milan, 1973.

13 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 187—189, նկ. 67, Sirarpie Der Nersessian, Aght'amar, Harvard, 1965, pl. 5, 8. „Декоративное искусство средневековой Армении», Л., 1971, рис. 37.

14 «Հայկական եկեղեցիներ», Ս. Էջմիածին, 1970, Մակարավանքի նկարը։

15 Շ. Ս. Պողոսյան, Գանձասարի վանքը, Երևան, 1972։

16 Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. № 3708, էջ 7բ, հմմտ. Առաքել Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1967, էջ 28—29, տախ. 23, նկ. 13, 14, 15։

17 Sirarpie Der Nersessian, Armenian manuscripts, Washington, 1963, pl. 18. 90.

գրերում կան նաև մարդու պատկերով, վառվող մոմերը որպես աշտանակ ձեռքերին բռնած կամ գլխներին դրված գլխատառեր (XIII դ. և XVII դ. ձեռագրեր)[18] (նկ. 5)։

Այս ամենով հանդերձ, ամենահավաստի տեղեկությունները թերևս գրավոր աղբյուրների վկայություններն են։ Հույն պատմագիր Քսենոփոնը (մ. թ. ա. 431—354 թթ.) վկայում է, թե հույների տասհազարանոց զորքի նահանջի ժամանակ, Հայաստանով անցնելիս, կոլխերի սահմանագծի մոտ հանդիպել է մեղվի բազմաթիվ փեթակների և որ զինվորներն ուտելով դրանց մեղրից, թունավորվել են ու նմանվել հարբածների[19]։

Ըստ հույն աշխարհագիր Ստրաբոնի (66 թ. մ. թ. ա.—24 թ. մ. թ.)՝ Արևելքի որոշ երկրներում մեղուները ծառերի բների և ճյուղերի մեջ փեթակներ են շինում, և մեղրը տերևների վրայով հոսում է, այդ երկրներից նա հիշատակում է Վրկանը, Մարաստանը, Շակաշենը և Արաքսենը՝ Հայաստանը[20]։

Ստրաբոնը վկայում է նաև, որ այս երկրների ժողովուրդներից հայերը, խալդերը, տիբերը, սաները և հեպտակոմետները շշմեցնող մեղրը օգտագործել են թշնամու զինվորներին ոչնչացնելու համար. «Տեղի բնակիչները ծառերի չբացված բողբոջներից ստացված շշմեցնող մեղրով լիքը լցված ամաններ են գրել ճանապարհի եզրերին՝ երբ զինվորները խմել են այդ մեղրը, կորցրել են գիտակցությունը։ Ապա տեղացիները հարձակվել ու առանց դժվարության սպանել են նրանց»[21]։

Հռոմեական պատմիչ Դիոդոր Սիցիլիացին (մ. թ. ա. I դ.) վկայում է, թե Հայաստանում կան թևավոր միջատներ, որոնց տեղացիք «Անտրեդոն» են կոչում և, որոնք իրենց՝ սիցիլիացիների մեղվից փոքր են, բայց շատ օգտակար։ Դրանք լեռների տարբեր ծաղիկներից հյութ են հավաքում, տեղափոխում քարածերպերի ճեղքերը, լցնում մոմերի մեջ և պատրաստում հիանալի քաղցր մեղր։ Սիցիլիացին հավաստում է նաև, որ Հայաստանում հանդիպել է այնպիսի բարեբեր, մրգառատ վայրերի, որոնց բնակիչները բախտավորներ են։ «Ժողովուրդը բախտավոր է, երկիրը մրգառատ, հողը բերրի, հացը առատ։ Ասում են խաղողի մի թուփը տալիս է 3 դույլ գինի։ Այստեղ աճում է կաղնու նմանվող ծառ, որի թփերից առատորեն մեղր է հոսում»[22]։ Սա հենց գազպեն է, որի մասին հիշում են նաև Փավստոս Բուզանդը, Զենոբ Գլակը և ուրիշներ։

Մեղուն պաշտպանական նպատակով հայերը օգտագործել են երկու հազար տարի առաջ՝ նրանց գազազեցրել և բաց են թողել թշնամու զորքերի մեջ, վերջիններիս մատնելով անասելի խուճապի[23]։

Պատմահայր Մովսես Խորենացին խոսելով Տիգրան Մեծի բարեգործությունների մասին, նշում է, որ նա երկրին բերեց խաղաղություն և շենություն, բոլորին լիացրեց յուղով և մեղրով։ Ներկայացնելով Տիգրանի արտաքինը,

18 Մատենադարան, ձեռ. № 8400, թ. 107ա։ Ձեռ. № 6059, թ. 117ա։

19 Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 105—107։

20 Ստրաբոն, Երևան, 1940, գլ. 6, էջ 13։

21 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОПК), вып. IV, Тифлис, 1884, стр. 82.

22 Նույն տեղում, էջ 92—93։

23 В. Ю. Некрасов, Пчелы, М., 1949, стр. 40. Ուշագրավ է «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» (Վենետիկ, 1842, էջ 184—185) գրքում եղած վկայությունը մեղրի մեկուսիչ և հականեխիչ հատկությունների մասին, որտեղ ասվում է, թե ինչպես Ալ. Մակեդոնացու դին Եգիպտոս են փոխադրել մեղր լցրած. կապարե դագաղով։

Խորենացին նրան բնորոշում է մեղվահայացք և մեղվակն մակդիրներով[24]։ Այնուհետև Խորենացին հաղորդում է, որ ժամանակին եղել են մեղվամոմով հարթեցված հատուկ տախտակներ, որոնց վրա դրել են։ Ուշագրավ է նաև այն տեղեկությունը, թե ինչպես Ասորեստանի Շամիրամ թագուհին Վանա լճի ափին կառուցված Տուշպա քաղաքի մի քարաժայռի երեսը այնպես է հարթեցրել, ինչպես գրիչները մեղվամոմով հարթեցնում էին տախտակը և վրան արձանագրել է տվել[25]։

Հայտնի է, որ հին աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում, մոմը լայնորեն օգտագործվել է մետաղաձուլության մեջ՝ կաղապարման ժամանակ, հատկապես նուրբ քանդակներ ու զարդանախշեր անելիս։ «Ավելի բարդ կամ տարողություն ունեցող իրերի ձուլումը կատարվում էր մոդելի օգնությամբ, որը կարող էր լինել կավից, փայտից և մոմից», «մոմե մոդելը գործածվում էր ավելի բարդ և նուրբ իրերի ու զարդերի պատրաստման համար»[26]։

Մեղվաբուծության բնագավառում հայ ժողովրդի հնագույն հմտությունների դիպուկ վկայություններ կան Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» մեջ։ Մի առիթով նա գրում է. «Անգործ մեղու՝ լաւ է, քան զժիր պիծակ»։ «Քաղցր է մեղր, բայց ախտալից մարմնոյ վնաս առնէ»։ «Մեղուաց՝ ղդուրս մեղուանոցացն (մեղվաբույն) յառաջ քան զցուրտն ականամոմով խնլոյ»[27]։ Սա նշանակում է, որ այդ ժամանակ նույնիսկ, հայերն արդեն քաջ ծանոթ էին ականամոմին։

Ղազար Փարպեցին խոսելով Արարատյան դաշտում առատ աճող և որոշ հիվանդություններ բուժող բույսերի արմատների և բանջարների մասին, դրանք համեմատում է մեղրի հետ. «Զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուղխ սերմանց»[28]։

Անանիա Շիրակացին Տարոնի բարեբեր հովիտը նկարագրելիս, բազմազան բարիքների թվում նշում է նաև գազպեն ու մեղրը. «Ունի եւ գազպեն եւ մեղր անոյշ քան զամենայն երկրի», նաև՝ «որ ունի լեառն՝ զԱնտիտաւրոս, եւ այլ փոքունս, եւ գետ զՄելանս եւ այլ»[29]։ Ուշագրավ է, որ մեղրի անվանումը պահպանվել է գետանվան՝ Մեղգետ (Մեղրագետ) և տեղանվան՝ Մեղդի, մեջ, որը գալիս է հնագույն ժամանակներից՝ Melidu անվամբ, այս վայրի անունով էլ ամբողջ Տարոնը՝ Մշո դաշտը կոչվել է Melidu[30]։ Մշո դաշտում են եղել Մեղրածոր գետակը, Մեղրաքար ժայռը, Մեղրագոմ գյուղը[31], Մեղրաձոր կիրճը՝ Սասունում[32], «Մեծ աւանն Մեղրի»[33], Մեղրի (հնում Արևիք) բեր-

24 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 74։

25 Նույն տեղում, էջ 55—59։

26 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. I, Երևան, 1958, տախ. 14, էջ 157։

27 «Եղնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 121, 217, 219։

28 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1878, էջ 23—24։

29 Ան. Շիրակացի, Մատենագրություն, ուսումնասիրությամբ Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1944, էջ 346, 349։ Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 92, 107—108։

30 Ս. Տ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 70, 85։

31 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 89, 90։

32 Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 136։

33 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 341։

1

4

5



6



2



7

3

8

ղին[34] ու Մեղրի գետը՝ Սյունիքում[35] և վերջապես Մեղրաձոր և Մեղրի ավանները ներկայիս Հայաստանում։ Հայտնի է նաև Մեղրիկ (Մելիաս) անունով հայ զորավար, որը մի այլ զորավարի՝ Գուրգենի հետ 934 թ. արաբներից ետ է նվաճել Մելիտինեն (Մալաթիան)[36]։

X դ. պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին նկարագրելով արաբների ավերածությունները և ավարառությունը Հայաստանում, նշում է, որ գյուղաքաղաք Գառնիից այլ ամենի հետ նրանք ավարի են ենթարկել նաև «զյոգնապատիկ Պարս մեղուոցաց բազմաց...»[37]։

Արաբ մատենագիր Ալ. Իսթահրին (մոտավորապես 930 թ.) անդրադառնալով Հայաստանում մեղրի առատությանը, գրում է, որ երկու կամ երեք մանա մեղրը արժե մեկ դիրհեմ (կես ֆրանկ, 15 կոպեկ)[38]։

XI դ. Հայաստանում ճամփորդած Նասիր Խուսրաուն պատմում է, որ Բերկրին, Վանն ու Բիթլիսը հայտնի էին մեղրի առատությամբ. «Մենք այստեղ (Բիթլիսում—Ա. Գ.) մեղր գնեցինք՝ հարյուր մանը մեկ դինարով...»։ Ինչպես նաև հաղորդում է, որ այստեղ եղել են մեղվապահներ, որոնք տարին 400—600 տիկ մեղր են ստացել[39]։ Այստեղից Ա. Կոթողյանը ենթադրում է, թե նշված քանակությամբ մեղր ստանալու համար անհրաժեշտ էր ունենալ 1000—1500 քթոցավոր փեթակ[40]։

Հովհաննես Իմաստասերը (XI—XII դդ.) մոմաբջիջների պատրաստման մեջ տեսնում է մեղվին հատուկ բնազդական արվեստի առկայություն։ Նա հիացած մոմաբջիջների այդ գեղեցիկ կառույցով հարց է տալիս՝ «Մի՞թե արուեստիւ և խորհրդով գործէ մեղուն... որ ուսեալ է և կու մարթէ առնել», ապա ինքն իր հարցին իմաստնորեն պատասխանում է. «ոչ, այլ ի բնութենէ, առանց խորհելոյ և արուեստիւ ուսանելոյ, զի հնարքն և արուեստ բնականք է»[41]։ Ինչպես տեսնում ենք, դեռևս ութ հարյուր տարի առաջ Իմաստասերը այն միտքն է հայտնում, որ մեղուն այդ ճարտարապետական դժվարին կառույցը՝ վեցանկյուն մոմաբջիջները, հյուսում է ոչ թե մտածելով, արվեստ սովորելով, այլ բնությունից օժտված բնազդով։ Մեղուների, նրանց երամների կատարած աշխատանքի մասին անուղղակիորեն խոսում է XI դ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցին՝ համեմատություն անցկացնելով մարդու և մեղվի միջև[42]։ Այս մասին այլաբանական վկայություններ ունի նաև նույն դարի իմաստասեր Գրիգոր Մագիստրոսը[43]։

Մեղվի և նրա արտադրանքների վերաբերյալ առատ տեղեկություններ կան միջնադարյան հայ բժշկարաններում։ Մխիթար Հերացին (XII դ.) «Ջերմանց մխիթարութիւն» գրքում զանազան հիվանդությունների դեղատոմսեր

---

34 Լեո, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1966, էջ 160։

35 Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 683։

36 Հ. Կ. Տեր-Սահակեան, Հայ կայսերք Բիւզանդիոնի, հ. Բ, Վենետիկ, 1905, էջ 70։

37 «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 339։

38 СМОПК, вып. XXIX, Тифлис, 1901, стр. 27.

39 Насир-и Хусрау, Сафар-Намэ. Книга путешествия, М.—Л., 1933, стр. 39.

40 Ա. Մ. Կոթողյան, Համառոտ մեղվաբուծություն, Երևան, 1968, էջ 9։

41 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի Մատենագրությունը, Երևան, 1956, էջ 316—317։

42 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 184։

43 Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 231—232։

է տալիս, որոնց մի ղգալի մասի բաղադրության մեջ անպայման մտնում են մեղրը և մոմը։ Այսպես, փորկապության, գլխացավի, փորացավի, այտուցման, զանազան վերքերի և այլ հիվանդությունների դեպքում մեղվի արտադրանքը այս կամ այն համամասնությամբ մտել է բաղադրատոմսերի մեջ[44], մի բան, որը, հավանաբար, առնչություն ունի ժողովրդական բժշկության հետ և մեծ մասամբ կիրառվում է մինչև օրս։

Ամիրդովլաթ Ամասիացին (XV դ.) իր բազմաթիվ աշխատություններում ներկայացրած 3754 դեղատոմսերի մեջ նույնպես լայնորեն օգտագործել է մեղվի արտադրանքները որպես կարևոր բուժիչ միջոցներ[45]։

Հույժ ուշագրավ են նաև միջնադարյան հայկական դատաստանագրքերը և կանոնագրքերը։ Հովհան Մանդակունու մի հոդվածում հացողու, արմավողու հետ միասին հիշատակվում է նաև մեղրողու օգտագործման արգելումը[46]։ Մի այլ կանոնագրքում («Կանոնք Կղեմայ») նշվում է ձեթ և մոմեղեն գողացողի պատժի չափը[47]։ Իսկ Բասղի գիր կանոնականը խոսում է ընդդեմ նրանց, ովքեր եկեղեցու շտեմարանից նախատեսվածից ավելի մեղր և այլ մթերք են օգտագործում[48]։ Մխիթար Գոշի (XII դ.) Դատաստանագրքում հոդվածներ կան, որոնք վերաբերում են մեղուների առուծախին, բուն մեղվապահությանը։ Մխիթար Գոշը խորհուրդ է տալիս մեղվափեթակները վաճառել աշնանը, երբ մեղուներն արդեն փեթակում սերեկել են մեղրը, մի հոդվածով էլ արգելում է հիվանդոտ, ծեր մայր ունեցող մեղվափեթակների վաճառքը, իսկ եթե մեղվափեթակը վաճառելուց տաս-քսան օր հետո հիվանդություն հայտնաբերվի կամ մայրը մահանա, փեթակը վերադարձվում է վաճառողին որպես պատիժ[49]։

Դավիթ Ալավկա որդու (XII դ.) կազմած կանոնագրքում օգտավետ խորհուրդներ են տրվում, թե ինչպես պետք է վարվել տարբեր դեպքերում, երբ մուկը այս կամ այն կերպ շփվում է մեղրի կամ մեղվափեթակի հետ[50]։

Ուշագրավ են նույնպես Սմբատ Գունդստաբլի (XIII դ.) կազմած դատաստանագրքի մեղվին վերաբերող հոդվածները։ Սա էլ Մխիթար Գոշի նման պահանջում է, որ մեղվի առ ու վաճառքի դեպքում խաբեբայություն չլինի, ու խարդախողը խստագույնս պատժվի օրենքով։ Եթե առ ու վաճառքը աշնանն է տեղի ունենում, ապա փեթակում կերապաշարը պետք է առատ լինի, եթե այն պակաս լինի ու փեթակը մարի, մեղավորը վաճառողն է, ուստի նա նախօրոք անպայման պետք է լրացնի կերապաշարը։ Եթե առ ու վաճառքը գարնանն է կատարվում, փեթակը տարվում է 20 օրվա ժամանակապայմանով։ Եթե այդ ժամանակաշրջանում կերը վերջանա կամ փեթակը մարի, մե-

---

44 Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 1, 75, 87, 100, 118, 149։

45 Ամիրտովլաթի Ամասիացւոյ. Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926, էջ 26, 28, 379, 427։

46 Մատենադարան, ձեռ. № 948, էջ 56ա—57ա, հմմտ. «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 496, 642։

47 «Կանոնագիրք Հայոց», էջ 73, 75, 93։

48 Նույն տեղում, հ. Բ, Երևան, 1971, էջ 133։

49 Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 367—368։

50 Մատենադարան, ձեռ. № 8459, էջ 146ա։

ղավորը վաճառողն է, իսկ եթե նշված ժամկետը լրանալուց հետո կամ տարին վատ լինելու պատճառով փեթակը մարի, վաճառողը մեղք չունի[51]։

Կիրակոս Գանձակեցին (XIII դ.) խոսելով հայոց կաթողիկոս Կոստանդնի սահմանած կանոնների մասին, նշում է նախ՝ մոմը որպես բուժիչ միջոց, ապա՝ հաղորդման ժամանակ մոմ ծխելու անհրաժեշտությունը, որպեսզի հաղորդումը ընդունելի լինի։ Այնուհետև, պատմիչը խոսելով Վանական վարդապետի մասին, նրա ժրաջանությունը նմանեցնում է մեղվի, ապա շեշտում է մեղրի բուժիչ հատկությունը, իսկ քաղցրաբարո Գևորգին մեծարում է Մեղրիկ հորջորջմամբ[52]։

Ինչպես արդեն ասվեց, միջնադարի որոշ հայ հեղինակներ նախընտրել են մարդկանց աշխատասիրությունը համեմատել մեղվի ժրաջանության, ողջախոհությունը՝ խոհեմության հետ։ Նրանցից էր Գրիգոր վարդապետ Բջնեցու (XIII դ.) աշակերտը (անունն անհայտ), որն իր ուսուցչի մասին, նրա համար ընդօրինակած 1283 թ. ձեռագրի հիշատակարանում, գրում է. «Սայ բազում աշխատութեամբ և մեծաւ ջանիւ ժողովեալ զսա, ի տեղոջէ ի տեղիս ընթանալով և յաշխարհէ յաշխարհ, որպէս գործասէր մեղու, որ զթևսն արձակէ և ի մարգսն թռչի և կապտէ պտուղ զանազան և գեղեցիկ, և աշխատի առնելով մաղսն զվեցանկիւնիսն և զընդիմադրել բջիչսն անկանելով»[53]։ Այստեղ դրսևորված են հեղինակի գիտելիքները ո՛չ միայն մեղվաբջջի վեցանկյուն լինելու մասին, նաև այն, որ մեղուն շրջելով ծաղկից-ծաղիկ, միաժամանակ, կատարում է խաչաձև փոշոտում, որը նպաստում է գեղեցիկ պտուղների աճմանը։

Գրիգոր Տաթևացին (XV դ.) անաշխատ մարդկանց նմանեցնում է բոռերի, իսկ ազնիվ ու աշխատասերներին՝ մեղուների։ Նա մեղվի և մրջյունի աղատ ու անշահախնդիր աշխատանքը հակադրել է իր ժամանակի արհեստանոցների վարձու աշխատողների և ստրուկների տաժանակիր աշխատանքին. «Զվաստակս ձեռաց քոց կերիցես՝ երանի է քեզ և բարի եղիցի... Որ արասցէ ոչ՝ կերիցէ մի. ղի այնպիսին՝ ուտէ զհաց ցաւոց և նման է նա բրէտի՝ որ ոչ վաստակի մեղր, այլ զայլոց վաստակ ուտէ»[54]։

Նույն կերպ է վարվում Թովմա Մեծոփեցին (XIV—XV դդ.), երբ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գործունեությունը հմտորեն համեմատում է ժրաջան մեղվի աշխատանքի հետ. «Յիմաստնոյն Սարկաւագ վարդապետէ մտառեալ է, սակաւ ինչ յամենեցունց մասնաւորեալ զպատշաճաւորն, իբր իմաստուն մեղու թռչելով ի մարգ և ի լերինս և ի ծաղկաւէտ բուրաստանս, ժողովելով զպիտանիսն առ ի նոցանէ ի յաւգուտ և ի շահ փրկութեան մարդկան»[55]։ Այստեղ ևս առկա է մեղվի դերը նեկտար և փոշի հավաքելիս բույսերի փոշոտմանը նպաստելու գործում, ինչպես նաև այդ ընթացքում մեղվի բնական ընտրության կարողության գաղափարի ըմբռնումը՝ երբ մեղուն ծա-

---

51 «Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Դունդստաբլի)», էջմիածին, 1918, էջ 26։

52 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 306, 310, 345։

53 Մատենադարան, ձեռ. № 1216, էջ 424ա։

54 Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Կ. Պոլիս, 1741, էջ 107—108։

55 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի Մատենագրությունը, էջ 112։

զիկներից ընտրում է այն օգտակարն ու պիտանին, ինչ անհրաժեշտ է մեղր պատրաստելու համար։

Հետաքրքիր է Առաքել Դավրիժեցու (XVII դ.) հաղորդումն այն մասին, թե ինչպես Շահ-Աբասի պատվերով Մովսես վարդապետը երեք պարսիկի սովորեցրել է մոմ սպիտակեցնելու գաղտնիքը։ Այդ նպատակով Շահ-Աբասը, մեծամեծ արտոնություններով, Մովսես վարդապետին ուղարկում է Ասպահան քաղաքը, Լալաբեկ իշխանին հրովարտակ գրելով. «Զի տացէ հարիւր լիտր մոմ և երեք ծառայ ի ծառայից թագաւորին՝ Մովսէս վարդապետին, և զամենայն ծախս նոցա հոգուցէ։ Եւ այգեստանեացն որոց և հաւանեսցի Մովսէս վարդապետն, անպատճառ տացեն նմա, զի անդ սպիտակացուցէ զմոմն, և ուսուցէ զծառայսն՝ տարցէ առաջին թագաւորին, ուր և իցէ նա»[56]։ Այդպես էլ արվում է։ Այլադավան շահին դուր են եկել Մովսես վարդապետի շնորհները, դրա համար էլ նրան «...տուեալ էր Մովսէսի զլուսարարութիւնն սուրբ էջմիածնի թագաւորական նոմոսիւ», որպես պարգև։ Պատմիչը հայտնում է նաև, որ «Վասն զի ամենայն վանօրայք ազգիս Հայոց՝ իւրաքանչիւր սեագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց. նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին»[57], որից իմանում ենք, որ վանքապատկան տնտեսություններն ունեցել են բազմաքանակ մեղվափեթակներ։

Հայտնի է, որ վանքապատկան կալվածքներն ունեցել են մեղվանոցներ, ձիթհաններ, ջրաղացներ, որոնց արտադրանքը օգտագործել են վանականները։ Վանքերն ունեցել են նաև վանքապատկան գյուղեր, որոնք ամեն տարի վանքին հարկ են տվել։ Օրինակ, XIII դ. մատենագիր Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության հավելվածում նշված է Տաթևի թեմի վանքական գյուղերից ստացված տասանորդի չափը՝ ըստ մթերքների. «...Տաթեւ ԻԴ (24) բեռ ցորեն և Գ (3) լիտր մեղր տան... Շնհէր՝ ԻԵ (25) բեռն ցորեն, Գ (3) թիլանի լիտր մեղր... Հալիձոր Ը (8) բեռն, Ե (5) մարգան ցորեն, Ա (1) թիլանի լիտր մեղր»[58]։ Վանքերի եկամուտները ավելանում էին նաև աշխարհականների նվիրատվությամբ։ Այսպես, Երնջակի ս. Կարապետ վանքին նվիրվել է այգի, չորս քթոցավոր մեղվափեթակ՝ հանուն նվիրողի հոգու փրկության[59]։

Հակոբ Կարնեցին նկարագրում է Բարձր Հայքի մեղրի առատությունը. «Եւ անտի գայ երկիրն Ապահունեաց պարոնանիստ, որ այժմ Խնուս ասեն. և ունի փոքրիկ դղեակ մի պարսպաւոր, ունի գիւղք բազումք հացալից և խոտալիր, և հովիտք բազում ոչխարաց, իւղ և մեղր իբրև զջուր առատ»[60]։ Մի այլ տեղում ավելացնում է, թե՝ «Եւ է երկիրս այս յոյժ լիութիւն հացի, մսի, եղի և գինւոյ. փայտ, աղ և մեղր անասելի ու անպատմելի» կամ «գառն մէկ

---

56 «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 301։

57 Նույն տեղում, էջ 288։

58 «Ժամանակագրութիւն Ստեփաննոս Օրբէլեանի», աշխատասիրությամբ Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1942, էջ 44։

59 Մ ե ս ր ո վ բ Ա ր ք-ե պ ի ս կ ո պ ո ս Ս մ ր ա տ ե ա ն ց. Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Թիֆլիս, 1906, էջ 243։

60 Հ ա կ ո ր Կ ա ր ն ե ց ի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 23։

ռուպ, ոչխարն՝ երկու ղուռուշ, կովն՝ վեց ռուպ կամ ութն ռուպ. ձի և եզն, էշն նոյն դնով, եղ և մեղր՝ կէս-կէս ղուռուշ մէկ լիտրն»[61]։

Մեղուն և նրա արտադրանքը արտացոլում են գտել նաև միջնադարյան հայ գեղարվեստական ու բարոյախոսական գրականության մեջ։ Այսպես՝ Ներսես Շնորհալու (XII դ.) հանելուկներում բազմազան համեմատություններ կան՝ կապված մոմի և մեղրի հետ։

«Ի յանշնչից շարժականաց,
Ծնունդ ճարպոյ ի ն[շ]խարաց,
Պարունակէ զնիւթեալ մանած,
Տայ տեսանել զդոյնս աչաց» (մոմ)[62]։

Հաջորդ հանելուկի պատասխանը մեղուն է՝

Գործավոր փոքր և հրաշալի,
Ամեն շրջի յանապատի.
Մասունս առնի նա ամենի,
Յառաջ բերէ գործ ցանկալի[63]։

Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել են հարսանեկան ծառագովքին նվիրված ժողովրդական քառյակներ, որոնք իրականում մեղվի ու մեղրի գովք են.

Գնացէք, բէրէք արդար մեղուն,
Որ գայ, գովէ, հայ, ծառս ու ծաղիկ։
Գնացին բերին արդար մեղուն...
Երնեկ յիջաւ, հայ, ծառատրկին...
Բարև երետ, հայ, թագաւորին,
Հազար բարին, հայ, իր խոշ բախտին։
Մենք էն մեղուին հետ կէհեյանք,
Երբ մուտն յընկներ հայ, հոն պառկէյանք...
Քաղցրր ծաղկունքըն ժողովէյանք...
Քաղցրաճաշակ, հայ, մեղր, շինէյանք,
Եւ մոմն աստուծոյ փէշքեաշ տայանք...»[64]։

Վերջապես Վարդան Այգեկցու (XII—XIII դդ.) «Աղվեսագրքի» «Կաթ մեղու պատճառ պատեբազմի» առակը ցույց է տալիս հայ ժողովրդի քաջատեղյակությունը ոչ միայն մեղվապահությանը, այլև մեղրի առ ու վաճառքին[65]։

Ուստի, միանգամայն բնական է, որ մի քանի դար առաջ պետականությունից զրկված հայ ժողովրդի մի ստվար հատվածը, որ բնակություն է հաստատում նախ Ղրիմի թերակղզում, ապա XVIII դ. վերջերին, Դոն գետի ավազանում՝ հիմնելով Նոր Նախիջևանը, քաղաքի խորհրդանիշ է ընտրում մե-

61 Նույն տեղում, էջ 41—42։

62 Մատենադարան, ձեռ. № 8575, էջ 308ա։

63 Ներսէս Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորա, Հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, Երևան, 1968, էջ 41։

64 Մատենադարան, ձեռ. № 8064, էջ 23բ, 24ա։

65 Վ. Այգեկցի, Աղվեսագիրք, Երևան, 1955, էջ 32—33։

ղուն, մոմաբջիջը և մեղվափեթակը[66] (նկ. 6), որով շեշտվում էր հայ ժողովրդի ժրաջանությունն ու աշխատասիրությունը։

Անշուշտ, մեղվապահությանը վերաբերող գրավոր տեղեկությունները սրանցով չեն սպառվում, սակայն վերևում բերվածներն էլ բավական են ցույց տալու համար, որ մեղվապահությունը Հայաստանում սկզբնավորվել է հնագույն ժամանակներից, անընդմեջ շարունակվել միջնադարում և հասել է մինչև մեր օրերը։

ПЧЕЛОВОДСТВО В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

А. О. ГАСПАРЯН

Резюме

Древнейшие сведения относительно пчел на Армянском нагорье можно датировать II тысячелетием до н. э. на основе тщательного изучения наскальных рисунков Сюника, а также различных изображений на культовых поясах, найденных при раскопках на берегу озера Севан и датируемых II—I тысячелетиями до н. э.

Примечательными являются бывшие в обращении на территории Армении монеты с изображением пчел: греческие (IV в. до н. э.), приписываемые Ани-Камаху, монеты, вычеканенные персидским царем Вагаршаком, а также перстни-печати I—II вв., найденные при раскопках Гарни.

Ячейки в виде шестигранных пчелиных сот обнаружены на куполообразных сводах Гегардского, Гандзасарского (XIII в.), на стенах Ахтамарского (X в.), Макараванкского (XIII в.) монастырей.

О развитии пчеловодства на Армянском нагорье свидетельствуют и письменные источники: греческие историки Ксенофонт (V в. до н. э.) и Страбон (I в. до н. э.), римский историк Диодор Сицилийский (I в. до н. э.), а также армянские историографы Мовсес Хоренаци, Езник Кохбаци, Казар Парпеци, Анания Ширакаци и др. О купле-продаже пчел и меда много сведений содержится в канонах, принятых на церковных соборах, в статьях судебников и сводов законов Ована Мандакуни, Мхитара Гоша и др.

Пчела и ее продукция разнообразно отражены в средневековой армянской художественной и нравоучительной литературе — у Нерсеса Шнорали, Вардана Айгекци, в народном эпосе, сказаниях, народных загадках и сказках.

---

66 Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Երևան, 1967, էջ 112, նկ. 4։